

Համարը N 227 Տիպը Որոշում Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ 2006.05.08/13(22) Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն Ստորագրող մարմինը ԼՂՀ վարչապետ Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 18.05.2006	Տեսակը Մայր Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Ստեփանակերտ Ընդունման ամսաթիվը 26.04.2006 Ստորագրման ամսաթիվը 26.04.2006 Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը
---	---

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԶՐԱԷԿՈՅԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ, ՀՈՍՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ, ԶՐԱՊԱՅՊԱՆ, ԷԿՈՏՈՆԻ ԵՎ ԱՆՕՏԱՐԵԼԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՅՄԱՆՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"26" ապրիլի 2006թ.

N 227

ք. Ստեփանակերտ

ԶՐԱԷԿՈՅԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ, ՀՈՍՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ, ԶՐԱՊԱՅՊԱՆ, ԷԿՈՏՈՆԻ ԵՎ ԱՆՕՏԱՐԵԼԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՅՄԱՆՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո որ ո շ ու մ** է:

1. Հաստատել **ջրաէկոհամակարգերի** սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, Էկոտոնի և անօտարեղի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

Հավելված
ԼՂՀ կառավարության
«26» ապրիլի 2006թ.
թիվ 227 որոշման

ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ԶՐԱԷԿՈՅԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ, ՀՈՍՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ, ԶՐԱՊԱՅՊԱՆ, ԷԿՈՏՈՆԻ ԵՎ ԱՆՕՏԱՐԵԼԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՅՄԱՆՄԱՆ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում **ջրաէկոհամակարգերի** սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, Էկոտոնի և անօտարեղի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները՝ բացառությամբ բնակչության կողմից խմելու, առողջարարական նպատակներով օգտագործվող ջրային ռեսուրսների սանիտարական պահպանման գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների, որոնք սահմանում է առողջապահության պետական լիազորված մարմինը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. **Ջրաէկոհամակարգերի** սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, Էկոտոնի և անօտարեղի գոտիների տարածքների փաստացի չափերն ու սահմանագծերը, ելնելով յուրաքանչյուր ջրային ռեսուրսի առանձնահատկություններից, կսահմանվեն Ջրի ազգային ծրագրի շրջանակներում դաշտային աշխատանքների իրականացման միջոցով:

3. **Ջրաէկոհամակարգերի** սանիտարական պահպանման տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) տարածքներ, որոնք պահպանվում են ջրային ռեսուրսների կենսաբանական, հիդրոլոգիական և ռելիեֆային արժեքների պահպանության համար:

բ) տարածքներ, որտեղ ապահովվում են մակերևութային ու ստորերկրյա ջրերի այնպիսի որակ և քանակ, որոնք կարող են պահանջվել մարդու առողջության ու բարեկեցության համար, ներառյալ խմելու ջուրը և այլ ջրերը, որոնք օգտագործվում են բուժական ու էկոլոգիական ամբողջականության նպատակներով:

գ) **ջրաէկոհամակարգեր**ի սանիտարական պահպանման տարածքները կարող են ընդգրկել գետի կամ լճի հատվածներ, գերխոնավ տարածքներ, լճակներ և լճեր, ինչպես նաև մերձակա տարածքներ, որոնք ենթակա են պահպանման՝ իրենց բնական վիճակով, որպես գործող առողջ էկոլոգիական համակարգեր և տարածքներ, որտեղ կարող է առաջանալ մարդու գործունեության կամ բնական շրջակա միջավայրի վերականգնման անհրաժեշտություն՝ ջրերի որակի և քանակի վրա հեղեղումների հետևանքով առաջացած աղտոտվածության, էրոզիոն և այլ բացասական ազդեցությունների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով:

դ) **ջրաէկոհամակարգեր**ի սանիտարական պահպանման տարածքները սահմանվում են մինչև 90 մետր շառավղով:

4. Հոսքի ձևավորման տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) տարածքներ, որտեղ ապահովվում են մակերևութային և ստորերկրյա ջրերի այնպիսի որակ և քանակ, որոնք կարող են պահանջվել մարդու բարեկեցության, ինչպես նաև էկոլոգիական ամբողջականության նպատակներով:

բ) հոսքի ձևավորման տարածքներն ընդգրկում են գետի ակունքն ամբողջությամբ, ստորերկրյա ջրադեղյուրների և բնադեղյուրների ակունքներն ամբողջությամբ, ինչպես նաև մերձակա տարածքները, որոնք ենթակա են պահպանման՝ իրենց բնական վիճակով, որպես գործող առողջ և էկոլոգիական համակարգեր:

գ) հոսքի ձևավորման տարածքները սահմանվում են մինչև 4000 մետր շառավղով:

5. Ստորերկրյա ջրերի պահպանման տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) տարածքներ, որտեղ ապահովվում են հիդրոերկրաբանական, հիդրոլոգիական, կլիմայական պայմանները և ջրատար հորիզոնների պահպանությունը՝ չխախտելով էկոլոգիական ամբողջականությունը:

բ) ստորերկրյա ջրերի պահպանման տարածքները կարող են ընդգրկել նաև համայնքային սահմանագծված ջրհավաքները:

գ) ստորերկրյա ջրերի պահպանման տարածքները սահմանվում են մինչև 150 մետր շառավղով:

6. Ջրապահպան գոտիների տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) տարածքներ, որտեղ ապահովվում են ջրային ռեսուրսների աղբտման, աղտոտման, տղմակալման և հյուծման կանխարգելումը, ինչպես նաև ջրային ռեժիմի համար բարենպաստ պայմանները:

բ) ջրապահպան գոտիների տարածքներն ընդգրկում են ջրային ռեսուրսների պահպանության համար նախատեսված բոլոր տարածքները:

գ) ջրապահպան գոտիների տարածքները սահմանվում են մինչև 32 մետր երկարությամբ շերտի տեսքով:

7. Էկոտոնի տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) ջրամերձ և ափամերձ առավել խոցելի տարածքներ, որոնք պահպանվում են մարդու գործունեության հետևանքով դրանց խախտումների նկատմամբ դրանց խոցելիության պատճառով:

բ) Էկոտոնի տարածքներն ընդգրկում են գետերի, լճերի, լճակների, բնական ջրագոյացումների խոցելի ջրամերձ և ափամերձ հատվածները:

գ) Էկոտոնի տարածքները սահմանվում են մինչև 150 մետր շառավղով:

8. Անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

ա) տարածքներ, որտեղ ապահովվում են ջրամատակարարման, ջրահեռացման, ինչպես նաև հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործումը, վերականգնումը և պահպանումը:

բ) տարածքներն ընդգրկում են ջրամատակարարման, ջրահեռացման և հիդրոտեխնիկական կառուցվածքներին անմիջապես հարող տարածքները:

գ) անօտարելի գոտիների տարածքները սահմանվում են մինչև 10 մետր երկարությամբ շերտի տեսքով:

**ԼՂՀ կառավարության
աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Ս. Գրիգորյան